ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-153-10.10.2017-ՊԻՄԻ-011/0 օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդվածներ 2, 3	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող փոփոխությունը շարադրել այնպես, որ կատարողական վարույթի 15-օրյա ժամկետ սահմանված լինելու դեպքում, դրա մեջ ևս չհաշվարկվեն կատարողական գործողություններն աճուրդային գործընթացում գտնվելու, գույքն ուղղակի վաճառքով իրացնելու, պարտապանի կամ նրա գույքի հետախուզման, ինչպես նաև կատարողական վարույթի հետաձգման կամ կասեցման ժամկետները: Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածում 2-րդ կետում «քաղաքացին» բառը փոխարինել «ֆիզիկական անձը» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Առաջարկվում է 5-րդ հոդվածից հանել 1-ին կետը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱԺ պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով մշտական հանձնաժողովի 30.11.2017թ. նիստում քննարկվել է ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի	Նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու

			Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունը և ընդունել այն, որի հիման վրա անհրաժեշտություն է առաջանում վերը նշված փոփոխությունը կատարել սույն փաթեթում:		մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ արված առաջարկությունների համատեքստում: